# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<27>> փետրվարի 2019թ. N ԱՄ/75-2019

ք. Արմավիր

### *<<ԱՊԱԳԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>*
### *ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասի <<դ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Ապագայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2018 թվականի սեպտեմբերի 3-ի N 32 գրությունը.

*որոշում եմ՝*

1. <<Ապագայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել <<Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել << Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:
3. <<Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ նոր կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնել իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 27.02.2019 17:16:42 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230 Հ.

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ